

17. «Ալի Օսման». Աչքի պատրանք՝ երկիւղ և հիւանդութիւն (11էն մինչ 17 կտորները՝ բացատրութիւնները իրենց մէջն են) :

18. «Ճէրկօ». Քաջութեան մարդանքներ, քիւրդ կնոջ արիութիւնն ու համեստութիւնը. կ'սպաննէ զինքն առեւանգել ուղղող ու կը կոչուի Առիւծուհի :

19. «Քէօր-Օղլու արչունի չափը». Կը պատմէ Քէօր-Օղլու աւազակութիւնները. որ նա իր տարած աւարներու մէկ մասը կը թողու լեռնարնակ քիւրդ աղքատներուն :

20. «Շաքիր աղա Ջէնկ». Ապստամբ՝ դաւաղրութեամբ է սպանուած :

21. «Սըմօ». Հայ վանքերու գողութիւնը, Վարաղայ դուղը : Քաղափար մը ահա վանքերու գողութեան մասին : «Հին ժամանակները Քիւրդխտանի ժուլաներ և Ֆազիններ հայ վանքերու մէջ շատ գողութիւն կ'ընէին, որովհետև անոնք վանքերու ստացուածքը կը կը նկատէին իբրև համայնքին պատկանելի. և ինչ որ կարողանային խլել վանքերէն՝ կը համարէին ինչպէս լաւ բաժին մը :»

Կը նշանակէ իրենք իրենց կը համարէին հայ համայնքէն և իսլամացած, ու բաժին կը պահանջէին այն ստացուածքէն՝ որ համայնքին կը պատկանէր :

22. «Չէթանճի Ապտուլլահ փաշա» (Էրզրումի Վալին). Գողեր գտնելու հանճարեղութեան պատմուած մը :

23. «Մէմպափիք». Պօտանցի քիւրդ մը կաշառք տալով իմամին՝ կը պահանջէ որ իր անունը յիշուի մզկիթը Խօտպայի մէջ՝ Ապպասի, Համզայի, Հասանի և Հիւսէյնի շարքին. մօլլան արարական հայնոյութիւններով կը յիշատակէ անոր անունը՝ որով ոչխարը կը բաժնեն իրենց միջև Մուլլան և Մուազզինը. քիւրդը այս առիթով կ'ուզէ իրեն անուանել քիւրդերու վեհապետ. իսկ քիւրդերը զայն կ'անուանեն «անապատի վեհապետ» : Կը տեսնուի որ քրդական վեհապետութեան գաղափարը Պօտանի մէջ կը կեդրոնանայ. իսկ քիւրդերը կը ծաղրեն իշխանութեան հասնելու այն յաջողութիւնը՝ որ կ'ա-